ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

01.10.2014թ. – 01.01.2015թ. ընկած ժամանկահատվածում քաղաքապետարանի կատարած աշխատանքները

Դիլիջան համայնքի 2014թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիրը:

2014թ. չորրորդ եռամսյակում տեղական մուտքերի արդյունավետ հավաքագրման շնորհիվ հավաքագրվել է 428063,4 հազ.դրամի եկամուտ:Հաշվետու ժամանակաշրջանում եկամուտների հավաքագրումը կազմել է 99 տոկոս, ինչը հնարավորություն է տալիս համայնքում իրականացնել մեծածավալ աշխատանքներ:

Դիլիջան համայնքի բյուջեի եկամուտների կատարողականը 01.01.2015թ. դրությամբ

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլան (հազ.դրամ)	Դեկտեմբերի պլանը աճողական տեսքով (հազ.դրամ)	Դեկտեմբերի կատարո-ղականը աճողական տեսքով (հազ.դրամ)	Փաստացին պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ	432234.15	432234.15	428063.36	99.04%
1.1 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ	53266.30	53266.30	45295.82	85.04%
1.2 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ	29790.00	29790.00	32358.50	108.62%
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	12846.00	12846.00	12856.45	100.08%
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	4500.00	4500.00	4351.30	96.70%
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	242650.40	242650.40	242650.40	100.00%
3.3 ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	28200.00	28200.00	28383.34	100.65%
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿ-ԻՑ ԵՎ ԾԱՌԱՅ-ՐԻ ՄԱՏՈՒՑ-ԻՑ ԵԿԱՄ-ՆԵՐ	2931.45	2931.45	2931.45	100.00%
3.5 ՎԱՐՁԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ	57550.00	57550.00	58410.19	101.49%
3.6 ՄՈՒՏՔԵՐ ՏՈՒՅԺԵՐԻՑ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻՑ	500.00	500.00	825.90	165.18%
ԸՆԴԱՄԵՆԸ	432234.15	432234.15	428063.36	99.04%

Դիլիջան համայնքի բյուջեի ծախսերի կատարողականը 01.01.2015թ. դրությամբ

Ծախսատեսակ / Հիմնարկ	Տարվա պլանը (դրամ)	Ամսվա պլանը (դրամ)	Փաստացի ծախսը (դրամ))
ԸՆԴԱՄԵՆԸ ՝	921715656.00	921715666.00	814862600.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Աղբահանում) (900402131024)	137134465.00	137134500.00	136237341.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Այլ մշակույթային կազմակերպություններ) (900402099023)	13689500.00	13689500.00	13520100.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Արտադպրոցական դաստիարակություն) (900402097027)	84662192.00	84662192.00	66603570.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ) (900402051230)	7828110.00	7828110.00	7410000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարություն) (900402058011)	102554910.00	102554910.00	95282432.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գյուղական խորհրդատվական ծառայություն) (900402051248)	60000.00	60000.00	60000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գրադարաններ) (900402094024)	20525660.00	20525660.00	20317683.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Դիլիջանի քաղաքապետարան) (900402051123)	109955600.00	109955600.00	108036004.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Զբոսաշրջություն) (900402000013)	9500000.00	9500000.00	3105900.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի այլ ծառայություններ) (900402133020)	3277054.00	3277054.00	3277054.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի հանր.ծառայություններ) (900402051149)	2285000.00	2285000.00	1945805.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընտանիքի անդամներ և զավակներ) (900402059019)	3600000.00	3600000.00	3480000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Թանգարաններ և ցուցասրահներ) (900402095021)	22860209.00	22860209.00	12455372.00

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ) (900402051164)	4390680.00	4390680.00	4390680.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հանգիստ, մշակույթ և կրոն) (900402051297)	16500000.00	16500000.00	9769150.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հանգստի և սպորտի ծառայություններ) (900402051180)	1000000.00	1000000.00	955570.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հրատարակչություններ,խմբագրություններ) (900402051198)	518000.00	518000.00	471489.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ճանապարհային տրանսպորտ) (900402057013)	172769700.00	172769675.00	150170475.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Մշակույթի տներ, ակումբներ) (900402096029)	26482516.00	26482516.00	26202516.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Նախադպրոցական կրթություն) (900402081013)	122238850.00	122238850.00	105838814.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Նավթամթերք և բնական գազ) (900402051289)	10500000.00	10500000.00	2767000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Շրջակա միջ.պաշտպանություն) (900402051255)	4160500.00	4160500.00	4160500.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Սոցիալական հատուկ արտոնություններ) (900402051156)	2980000.00	2980000.00	2939000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ) (900402174016)	53820.00	53820.00	0.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Փողոցների լուսավորում) (900402132022)	41078000.00	41078000.00	35361145.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Քաղաքացիական պաշտպանություն) (900402051263)	105000.00	105000.00	105000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ) (900402086012)	1005890.00	1005890.00	0.00
ԸՆԴԱՄԵՆԸ՝	921715656.00	921715666.00	814862600.00

Քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները, 35 ընտանիքի տրվել է դրամական օգնություն:

Յուրաքանչյուր նորածին երեխաների համար 75 ընտանիքի տրվել է միանվագ դրամական օգնություն:

Դիլիջան քաղաքում գործող <Հույսի Կամուրջ> հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների

ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար համայնքի բյուջեից յուրաքանչյուր ամիս ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն:
Դիլիջան քաղաքի թվով 5 դպրոցներ հաճախող երեխաներին 2014թ.-2015թ. ուսումնական տարվա համար դասագրքերի վճարը փոխհատուցելու նպատակով հատկացվել է 998980 դրամ: Դիլիջանի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկություններ և <Հույսի կամուրջ> ՀԿ հաճախող երեխաների համար ձեռք բերել 922000 դրամի ամանորյա նվերներ:Հայրենական պատերազմի 15 վետերանների տրվել են ամանորյա նվերներ:

Իրականացվել է Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 8-10 շենքերից դեպի Գայի փողոց հատվածի աստիճանների կառուցման և շրջակա տարածքի բետոնացման աշխատանքներ. վերականգնվել է Կալինինի փողոցի թիվ 2 դպրոցին հարակից փողոցի հենապատը Շարամբեյան փողոցի բնակիչների խնդրանքով վերակառուցվել է Մյասնիկյան փողոցից դեպի Լերմոնտով փողոց ճանապարհահատվածի ջրահեռացման համակարգը, քաղաքի տարբեր հատվածներում կատարվել է փոսային նորոգում:Մոլդովական փողոցից մինչև Բարեկամություն և Այգեստան փողոցներ կատարվել է ասֆալտի ջարդոնով փոսալցում: Հովսեփյան փողոցի բազմաբնակարան բնակելի շենքերի շքամուտքերի ապակե բլոկների վերակառուցման համար պատվիրվել է նախագծանախահաշվային փաստաթղերի կազմման աշխատանքներ Քաղաքի տարբեր հատվածներում կատարվել է փողոցային լուսավորության համակարգի համալրում և հիմանորոգում:Քաղաքի տարբեր թաղամասերում տեղադրվել են խաղահրապարակներ, զրուցատաղավարներ և նստարաններ:
Ավարտվել են Շահումյան փողոցի 17 բնակելի շենքերի դռների և պատուհանների փոխման աշխատանքները:
Զգալի աշխատանքներ են իրականացվել լուսավորության, աղբահանության և սանիտարական մաքրման բարելավման հանար:Իրականացվել է աղբավայրի խնամք:

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ